ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2024 թվականի N 82 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱ-ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 86-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 86-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման N 1 հավելվածում՝

ա. 2-րդ կետի առաջին նախադասությունում «արտակարգ իրավիճակների նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության» բառերով,

բ. 2.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.3-րդ կետով.

«2.3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով թափուր զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող անձի դեպքում մարտական գործողություններին մասնակցության մասին տեղեկանքը տրվում է այդ անձին թափուր զինվորական պաշտոնի նշանակած զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (ղեկավարի) կողմից՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողի կամ օրենքով սահմանված այլ շահառուի դիմումը զորամասում (զինվորական կառավարման մարմնում) սահմանված կարգով մուտք լինելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկանքում նշվում են թափուր զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող անձին թափուր զինվորական պաշտոնի նշանակելու հրամանի համարի և ժամկետի, այդ անձի կողմից մարտական գործողություններին մասնակցության հանգամանքի, ժամկետի ու վայրի վերաբերյալ տեղեկությունները: Տեղեկանքը կազմվում է երկու օրինակից, առաջին օրինակը տրվում է դիմումատուին, իսկ երկրորդ օրինակը պահվում է զորամասում (զինվորական կառավարման մարմնում):».

2) որոշման N 3 հավելվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետի «ա» պարբերությունում «արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության» բառերով.

3) որոշման N 4 հավելվածի 3-րդ կետում «ազգային անվտանգության և ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, քրեակատարողական ծառայության և փրկարարական ծառայության» բառերը և 8.1-ին կետում «ազգային անվտանգության և ոստիկանության հանրապետական գործադիր մարմիններից, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն

ապահովող, քրեակատարողական և փրկարարական» բառերը փոխարինել «ներքին գործերի, ազգային անվտանգության, քրեակատարողական կամ դատական ակտերի հարկադիր կատարման բնագավառների պետական լիազոր» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ